

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2-3 (84-85)
2019 թ.

Գլխավոր խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ռ ի ու լ ը

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝
[http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետների:

12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
24.09.2019

Հանձնված է տպագրության
15.10.2019

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2-3 (84-85)
2019 г.

Главный редактор:
академик НАН РА,
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: [http://ysu.am/faculties/hy/Law/
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 24.09.2019
Подписано к печати 15.10.2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պետության և իրավունքի տեսություն

Հայկ Սարտիրոսյան

ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՆԱՆԻՋՄԵՆՏԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՔՆՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՐ 5

Քրեական իրավունք և դատավարություն

Татьяна Молчанова

ПЕРСПЕКТИВА ИСПОЛЬЗОВАНИЯ «BIG DATA» В ИЗУЧЕНИИ И ИЗМЕРЕНИИ ОРГАНИЗОВАННОЙ ПРЕСТУПНОСТИ В СФЕРЕ ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ..... 11

Տիգրան Ղազարյան

ԵՆԹԱԴՐՅԱԼ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԾ ԱՆՁԻ ԻՐԱԿՈՒՄՔՆԵՐՆ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ 19

Սեվակ Պողոսյան

ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՄՍՈՒՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 30

Նելլի Աշրաֆյան

ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏԿԵԼԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՔ 38

Ануш Акопян

ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ПООЦРИТЕЛЬНЫХ НОРМ В ОТНОШЕНИИ ВЗЯТКОДАТЕЛЯ ПО УГОЛОВНОМУ ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ..... 45

Էմմա Ավագյան

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 53

Դավիթ Զիլֆինյան

ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԱԽԿԻՆ ԱՇԽԱՏԿԻՑ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԱՆՁԻ ՀԱՏԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ 62

Քաղաքացիական իրավունք և դատավարություն

Հովսեփ Բեդկյան

ՊԱՐՏԱՎՈՐԵՑՄԱՆ ՀԱՅՑԵՐՈՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 70

Գարիկ Ավագյան

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ . 82

Ռուբինա Պետրոսյան

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ, ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆԿՈՂ ԵՐԵՒԱՅԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՇՓԿԵԼՈՒ ԻՐԱԿՈՒՆՔԸ 89

Դավիթ Օհանյան

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 100

Աննա Մկրտչյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎ..... 109

Իսկուհի Հովհաննիսյան

ԳՈՐԾԱՏՈՒԻ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՀԻՄՔՈՎ..... 117

Միջազգային իրավունք

Գրիգոր Զոբանյան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 126

ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՔՆՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ

Հայկ Մարտիրոսյան

*ԵՊՀ պետության և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Պետական մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովումը, հանրային վերահսկողության մեխանիզմների արդյունավետ կիրառումն անհրաժեշտ նախապայման են դրանց նկատմամբ հանրային վստահություն ապահովելու գործում: Այս առումով չափազանց կարևոր են տեղեկատվության ազատության և պետական մարմինների գործունեության մեջ բաց կառավարման սկզբունքների ներդրման հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումները, քանի որ դրանց իրացման աստիճանը պայմանավորում է նաև պետական համակարգի գործունեության թափանցիկությունը, նրանց գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը, պետություն-հասարակություն համագործակցության արդյունավետ համակարգերի սահմանումը: Տեղեկատվության ազատությունն ու հասանելիությունն ըստ էության և՛ սկզբունք են պետական համակարգի գործունեության բնագավառում, և՛ իրավունք, որն ընձեռվում է յուրաքանչյուր անձի՝ սահմանված կարգով և ձևաչափով պետության տիրապետած տեղեկատվության հասանելիության առումով: Առաջին հայացքից թվում է, թե տեղեկատվության հայցման գործընթացը էական նշանակություն չի կարող ունենալ իրավապահ մարմինների գործունեության դաշտում՝ այդպիսի մոտեցումը հիմնավորելով այդ մարմինների գործունեության որոշ ուղղություններում գաղտնիության սկզբունքով, սակայն խնդրին խորությամբ անդրադառնալիս ակնառու է դրա ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական և սոցիալական նշանակությունը¹: Ընդհանուր առմամբ չափազանց կարևոր նշանակություն ունեն պետական մարմինների գործունեության մեջ կառավարման ժողովրդավարական սկզբունքների ամրագրումն ու իրացումը, որը, սակայն, չի նշանակում, թե այդ համակարգերը չպետք է առաջնորդվեն գործունեության առանձնահատկություններով պայմանավորված տեղեկատվության հասանելիության աստիճանի և հանրայնացման ժամանակային գործոնի նպատակահարմարությամբ, քանի որ բոլոր դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել հանրային շահի գերակայությունը²: Միաժամանակ իրավական կարգավորումների դաշտում հնարավորինս պետք է բացառել տեղեկատվության հասանելիությունն արհեստական սահմանափակումների պրակտիկայից: Մասնավորապես՝ տեղեկատվության ազատության և բաց կառավարման համակարգերի արդյունավետ ներդրումը պետական կառավարման համակարգում, ինչո՞ւ չէ՝ նաև իրավապահ մարմինների գործունեության մեջ նախ բարձրացնում է նրանց գործունեության արդյունավետությունը, իսկ գլոբալ առումով սահմանում է պետական և քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից վերահսկողության մեխանիզմ-

¹ Տե՛ս **Philip Coppel**. Information rights. Law and practice. Publishing «Hart», 2014.

² Տե՛ս **Эктумаев А.П.** Право на свободу слова как основное право. Текст научной статьи. //Государство и право. М. 2012, էջ 42:

ներ: Հակառակ պարագայում պետական մարմինների գործունեության նկատմամբ վստահության աստիճանը հասարակության մոտ անկում է ապրում, քանի որ տեղեկատվության անհարկի սահմանափակումները և թափանցիկ կառավարման բացակայությունը կարող են հանգեցնել պետական համակարգի և հասարակության միջև անջրպետերի: Պետական մարմինների գործունեության հաշվետվողականության հիմնախնդիրը կարևոր նախապայման է հակակոռուպցիոն պայքարում արդյունավետությունը և հանրային վերահսկողությունն ապահովելու գործում: Քաղաքական համակարգի կայունացման անցումային ժամանակաշրջանում քաղաքացիական հասարակության վերահսկողությունը որպես մասնակցության ձև առավել քան կարևոր է պետական համակարգի արդյունավետ գործունեությունն ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս իրականացվող հասարակական-քաղաքական գործընթացները, որոնք ուղեկցվում են հասարակության մոտ ոչ միանշանակ ընկալումներով, պահանջում են դրանց մասնակցող սուբյեկտների հաշվետվողականություն: Ներկայումս Հայաստանում իրականացվող հակակոռուպցիոն պայքարի շրջանակներում ավելի է կարևորվում պետական մարմինների և հատկապես իրավապահ մարմինների գործունեության հաշվետվողականությունը, որի թերի իրացումը հասարակության մեջ ձևավորում է անհասկանալի և կասկածելի մթնոլորտ, ինչն իր հերթին ուղեկցվում է այդ գործընթացում կոռուպցիոն ռիսկերի հնարավորությունների մասին քննարկում-քննադատություններով: Դրա ուղղակի օրինակը մինչև 2018թ. տարբեր սուբյեկտների գործունեության հետևանքով պետությանը պատճառված վնասի փոխհատուցման գործընթացի վերաբերյալ հասարակական ոչ միանշանակ վերաբերմունքն է: Եվ դրա հիմնական պատճառը գործընթացի թափանցիկության ոչ բավարար մակարդակն է և իրավապահ մարմինների գործունեության հաշվետվողականության վերաբերյալ թերի իրավական կարգավորումները, ինչպես նաև այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլերի հապաղումը:

Քննարկվող հիմնախնդիրն ինքնին ունի հետևյալ կառուցվածքը՝

1. Ոլորտում առկա իրավիճակը,
2. Դրանց հաղթահարման եղանակները և ուղիները,
3. Հիմնավորումներ և առաջարկներ:

Իրավապահ համակարգի նկատմամբ հասարակական կամ հանրային վերահսկողությունը ներառում է.

- Կազմակերպական վերահսկողություն,
- Գործառական կամ գործընթացային վերահսկողություն:

Կազմակերպական վերահսկողության իրականացումն առնչվում է իրավապահ մարմինների ձևավորման և դրանցում կադրային քաղաքականության իրականացման հիմնախնդիրներին, իսկ գործառական վերահսկողությունը ներառում է գործունեության նկատմամբ իրականացվող հսկողական մեխանիզմները:

Կազմակերպական առումով իրավապահ մարմիններում կադրային քաղաքականությունը ևս պետք է գտնվի հանրային վերահսկողության ներքո: Այս առումով արդիական են կառավարման պաշլամենտական ձևի պայմաններում իրավապահ մարմինների ղեկավարների նշանակումը և հաշվետվողականությունը խորհրդարանական վերահսկողությանը վերապահելու խնդիրը:

Հասարակական հետաքրքրությունների առումով էական է գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների պարզաբանումը, քանի որ այն ներառում է վերահսկողության բովանդակային կողմը:

Վերոնշյալը ներառում է գործունեության երկու բնագավառ՝ օպերատիվ-հետախուզական և նախաքննական: Առաջինն ըստ էության դուրս է որևէ վերահսկո-

դությունից, նույնիսկ դատախազական հսկողության շրջանակներից, երկրորդ ոլորտում իրավակարգավորումները հստակեցման անհրաժեշտություն ունեն:

Մասնավորապես՝ խնդրի կարևորությունն այն է, որ մինչդատական վարույթի իրականացման փուլում բախվում են երկու կարևոր սկզբունքներ՝

1. Հանրային իրազեկման ազատության,

2. Մինչդատական քննության կամ նախաքննության գաղտնիքի:

Դրանց հարաբերակցության խնդիրն առ այսօր մնում է հակասական այն պատճառով, որ ՀՀ օրենսդրությունը, այդ թվում՝ քրեադատավարական օրենսդրությունը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը հստակ չեն կարգավորում նախաքննության գաղտնիք պարունակող տեղեկատվության ցանկը, որի պատճառով էլ վարույթ իրականացնող մարմինները շահարկում են հիմնախնդիրը, և տեղեկատվություն ստանալու վերաբերյալ տարբեր միջնորդությունների և դիմումների տրվում են կամայական պատասխաններ և գնահատական: Խնդրի էությունն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ տեղեկատվություն տրամադրող կարող է մերժել դիմողին, եթե այն պարունակում է հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ:

Խնդիրն առավել քան կարևոր է ներկայումս՝ հաշվի առնելով հանրային պահանջը կոռուպցիոն գործերի բացահայտման գործընթացի նկատմամբ հասարակական վերահսկողություն սահմանելու առումով:

Մինչդատական վարույթ իրականացնող մարմիններն անշուշտ իրենց գործունեության վերաբերյալ հրապարակում են վիճակագրական տվյալներ, հիմնականում՝ կիսամյակային և տարեկան, սակայն խնդրի կարևորությունը առանց հարցման տեղեկատվությունը հրապարակելու գործընթացը չէ, այլ հայցվող տեղեկատվությունը տրամադրելու անհրաժեշտությունը:

Գտնում ենք, որ օրենսդրական փոփոխությունների ճանապարհով անհրաժեշտ է ամրագրել տեղեկատվության այն ցանկը, որը չի կարող նախաքննության գաղտնիք լինել: Օրինակ՝ հանցագործության դեպքի առթիվ հարուցված քրեական գործի քննության ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը, քննություն իրականացնող սուբյեկտի փոփոխության վերաբերյալ տվյալներ (ըստ անհրաժեշտության բացառելով անձնական տվյալների հրապարակումը: Անհրաժեշտությունը պայմանավորված է քննության ուղղության նկատմամբ հսկողական մեխանիզմների պահպանմամբ), հանցագործությամբ պատճառված վնասի չափը, վերականգնման վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ աղբյուրները, բյուջետային կամ արտաբյուջետային հաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնցում ամրագրված են ֆինանսական միջոցները, վարույթի ավարտման հիմքերը: Նման տրամաբանությամբ խնդրի իրավական կարգավորման դեպքում մինչդատական վարույթ իրականացնող մարմնի կողմից կամայականորեն տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքերը հնարավորինս կբացառվեն:

Ներկայումս հասարակության մեջ առավել արդիական է դարձել կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում հանրային վերահսկողության մեխանիզմների կիրառության անհրաժեշտությունը:

Այդ ոլորտում թափանցիկության և հրապարակայնության խնդիրը կարևոր է հասարակական վստահության աստիճանը բարձրացնելու տեսանկյունից: Ուստի չափազանց կարևոր է քննության ընթացքի վերաբերյալ հանրությանը պարբերաբար իրազեկելու խնդիրը: Հատկապես հետհեղափոխական ժամանակաշրջանում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հանրային հսկողության արդյունավետ մեխանիզմների ներդրումը ունի չափազանց կարևոր նշանակություն:

Ընդհանուր առմամբ հակակոռուպցիոն քաղաքականությունը պետք է հիմնված լինի նաև հետևյալ հիմնարար արժեքները կենսագործելու նախապայմանի վրա.

. **Թափանցիկություն:** Իշխանության և հանրային ինստիտուտների ներկայացուցիչներն ապահովում են հանրային շահին առնչվող տեղեկատվության մատչելիությունը, որոշումների կայացման գործընթացի թափանցիկությունը և այդ գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

. **Կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելում:** Առաջնահերթ և պարտադիր է ապահովել կոռուպցիոն իրավախախտումներ ծնող և դրանց նպաստող նախադրյալների վաղ բացահայտումը և ժամանակին չեզոքացումը:

. **Համագործակցություն և համաձայնեցում:** Կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացին ներգրավված ինստիտուտները պետք է սերտորեն համագործակցեն՝ ապահովելով նպատակների և դրանց նվաճմանն ուղղված միջոցառումների միասնական սահմանումը և համատեղ իրականացումը:

. **Հանրային-մասնավոր գործընկերություն:** Անհրաժեշտ է ապահովել կոռուպցիայի դեմ ձեռնարկվող կանխարգելիչ կոնկրետ միջոցառումների իրականացմանը քաղաքացիական հասարակության և գործարար հանրության ներգրավվածությունը¹:

Վերոնշյալ սկզբունքները կենսագործելու համար անհրաժեշտ է հստակեցնել ոլորտում հանրային իրազեկման համար պատասխանատու սուբյեկտների շրջանակը: Գտնում ենք, որ մինչդատական վարույթի ընթացքում դատախազական մարմինները՝ որպես հսկողական լիազորություններ իրացնող միակ կառույց, պետք է հանդես գան տեղեկատվության տրամադրման հիմնական պատասխանատուի դերում՝ չբացառելով նաև վարույթ իրականացնող մարմինների պատասխանատվությունը: Վերոնշյալը պայմանավորված է նաև այն կարևոր հանգամանքով, որ վիճակագրությունը և վերլուծությունը հանրային իրազեկման առումով նպատակահարմար է կենտրոնացնել ողջ նախնական քննության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնում: Սա կբարձրացնի նաև պետական մարմնի պատասխանատվությունը, ինչպես նաև հասարակական հատվածի ներկայացուցիչների համար կվերացվեն բյուրոկրատական քաշքշուկները՝ հանրային հետքերություն ներկայացնող տեղեկատվությունը կոնկրետ սուբյեկտից հայցելու և ստանալու գործում:

Կոռուպցիոն հանցագործությունների գործերով քննության ընթացքում իրազեկման պատասխանատու սուբյեկտի ամրագրման գործընթացը կախված է այդ գործերով քննություն իրականացնող մարմնի կազմակերպական կառուցվածի հստակեցմամբ: Մասնավորապես՝ այս առումով ներկայումս քննարկվում է բազմաֆունկցիոնալ և տարանջատված (կանխարգելիչ և իրավապահ գործառնությունների տարանջատման սկզբունքով) մոդելներով այդ մարմինների կազմավորման հիմնախնդիրը: Քննարկման փուլում է նաև կոռուպցիոն գործերի քննությունը մեկ կամ մեկից ավելի իրավապահ մարմիններին վերապահելու խնդիրը: Այս առումով հատկանշական է, որ քննարկվող տարբերակներում ներառված է նաև օպերատիվ-հետախուզական, նախաքննական գործառնությունների կենտրոնացումը մեկ մարմնի ձեռքում մոդելը, որն իրացվել է Արևելյան Եվրոպայի երկրներում, ինչպես օրինակ՝ Ուկրաինա, Ռումինիա և այլն: Տեղեկատվության մատչելիության առումով խնդիրը առավել քան կարևոր է, քանի որ և՛ օպերատիվ-հետախուզական, և՛ նախաքննական տվյալները կարող են հայցվել մեկ մարմնից:

¹ <https://www.u4.no/publications/corruption-risk-research-funding.pdf>, Corruption risks in research funding in developing countries, By Ortrun Merkle.

Մինչև համապատասխան փոփոխությունների վերաբերյալ հայեցակարգային հիմնադրույթների մշակումն ու հիմնավորումը գործող տարբերակի պարագայում որպես պատասխանատու սուբյեկտ դարձյալ պետք է արձանագրել դատախազական մարմիններին:

Վերոգրյալը հիմք է տալիս կատարել հետևյալ առաջարկները.

1. Նախնական քննության ոլորտում տեղեկատվության տրամադրման կամ իրազեկման հիմնական պատասխանատու սուբյեկտի ամրագրում (դատախազություն),

2. Օրենսդրական փոփոխությունների ճանապարհով նախաքննության գաղտնիք չհանդիսացող տեղեկատվության շրջանակի ամրագրում,

3. Կոռուպցիոն գործերով օրենսդրորեն հանրային իրազեկման ժամկետների պարբերականության սահմանում:

Այս փոփոխությունները ենթադրում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկման փուլում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը՝ նպատակահարմար է նախագծով կարգավորել այն՝ հետագա փոփոխություններից խուսափելու նպատակով:

МЕХАНИЗМЫ ОБЩЕСТВЕННОГО КОНТРОЛЯ И ПРИМЕНЕНИЕ ПРИНЦИПА ГЛАСНОСТИ К ДЕЯТЕЛЬНОСТИ ОРГАНОВ ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ

Айк Мартиросян

*Доцент кафедры теории и истории государства
и права ЕГУ, кандидат юридических наук*

На этапе предварительного следствия вопрос защиты прав человека в настоящее время является наиболее важным вопросом, так как конфиденциальность предварительного расследования и свобода информации находятся в противостоянии на этом этапе уголовного расследования. В связи с этим крайне важно уточнить сферу конфиденциальности предварительного расследования, с тем чтобы право на свободу информации на данном этапе не было формализовано и создавались основания для его реализации.

PUBLIC OVERSIGHT MECHANISMS AND THE APPLICATION OF THE PRINCIPLE OF PUBLICITY TO THE ACTIVITIES OF THE PRELIMINARY INVESTIGATION BODIES

Hayk Martirosyan

Docent at the YSU Chair of Theory and History of State and Law,

Candidate of Legal Sciences

At the stage of the preliminary investigation, the issue of human rights protection is currently the most important issue, as the confidentiality of the preliminary investigation and the freedom of information are at that stage of the criminal investigation. In this regard it is extremely important to clarify the scope of the confidentiality of the preliminary investigation so that the right to freedom of information at this stage is not formally formalized and the basis for its realization.

Բանալի բառեր – *խոսքի ազատություն, մարդու իրավունք, հիմնական իրավունք, անօտարելի իրավունք, հաղորդակցություն, տեղեկատվություն, անբախտելի իրավունք*

Ключевые слова: *свобода слова, права человека, основные права, неотъемлемые права, неотчуждаемые права, коммуникация, информация*

Key words: *freedom of speech, human rights, fundamental rights, inalienable rights, indefeasible rights, communication, information*